«Նոր ժամանակի կրթություն»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Սյուզաննա Մարկոսյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թաթուլի Թ. Կրպեյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն

2. Ի՞նչ է առակը

2.1 Առակների նպատակը

2.2 Սողոմոն թագավորի առակները

3. Առակները և նրանց վերլուծությունները

3.1 Առակ բարի սամարացու մասին

3.2 Անիրավ տնտեսի առակը

3.3 Սերմնացանի առակը

3.4 Պահված գանձերի առակը

3.5 Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում

3.6 Նոր կարկատանը հին հագուստի վրա

3.7 Անպետք աղը

3.8 Ժայռի վրա կառուցել տունը

3. Փարիսեցու և մաքսավորի առակը

4. Եզրակացություն

5. Գրականության ցանկ

Ներածություն

Դեռևս վաղ ժամանակներից, քրիստոնեությունը, որպես պետական կրոն ընդունելուց հետո հայ ժողովուրդը կարդացել է Աստվածաշունչը, լսել և պատմել միմյանց մարդկային բարձր որակներ կերտելու հարցում թերևս ինձ համար ամենաարժեքավոր և ամենակատարյալ բանը՝ աստվածաշնչյան առակները:

Իսկ այժմ, երբ այդ առակները ուսուցանվում են հանրակրթական դպրոցներում շատ մեծ նշանակություն ունեն սովորողների բարոյահոգեբանական դաստիարակության գործում:

Գաղտնիք չէ, որ կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության գործընթաց է: Ուստի մեր պետության վաղվա կերտողները այսօրվա մտավոր ներուժի սաղմերն են: Այս առումով աստվածաշնչյան առակները, որոնք հարազատ են հայ ազգային բարեպաշտ հոգեբանությանը, առավել արդյունավետ կարող են ազդեցություն ունենալ սովորողների հուզական աշխարհի վրա:

Այս եղանակով երեխաների մեջ դաստիարակվում են բարոյական, վեհ մարդկային այնպիսի որակներ ինչպիսիք են՝ բարությունը, ազնվությունը, անկեղծությունը, հեզությունը, համբերատարությունը, անձնազոհությունը, ներողամտությունը և այլն: Իսկ չարությունը, ստախոսությունը, ծուլությունը, կեղծավորությունը, հիշաչարությունը, դաժանությունը և այլ բացասական որակներ մերժվում և քննադատվում են: Ուստի վստահորեն կարող ենք ասել, որ աստվածաշնչյան առակների դաստիարակչական արժեքն անգնահատելի է: Իսկ առակի խորը միտքը սովորողների գիտակցությանը հասցնելու համար մշակվել են տարատեսակ մեթոդներ և

հնարներ, աստվածաշնչյան առակների միջոցով բարոյական խրատներ են ուղղում սովորողին՝ վեր հանելով հիմնական միտքը:

Այսպիսով, առակների դասավանդումը դպրոցներում միշտ ունի իր նպատակը՝ դաստիարակել բարձր բարոյական արժեհամակարգ ունեցող սերունդ, վերացնել սովորողի բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական և աշխարհընկալման գիտելիքները: Առակների շնորհիվ զարգանում է նաև աշակերտի ընթերցելու որակական հատկանիշները: Դասագրքերում տեղ գտած հայ և օտարագիր առակագիրների գործերը իրենց պարզ ու մատչելի գրելաոճով միշտ էլ հետաքրքրել են հայ ընթերցողին: Սակայն այլ է աստվածաշնչյան առակների դերն ու նշանակությունը: Այն ավելի խորն է, ավելի իմաստալից, ավելի հավաստի, քանի որ այն վերցված է Աստվածաշնչից, իսկ տվյալ դեպքում նյութի հավաստիությունը անվիճելի է: Ուստի տեղին եմ համարում նշել, լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում և գրականության գրքերում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ աստվածաշնչյան առակների ներառմամբ:

Անվիճելի է այն կարծիքը, որ առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը: Ինչպես Հիսուսն էր խրատ նում իրեն լսող և հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ:

Ահա թե ինչու սերունդներին պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց արդիությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Ի՞նչ է առակը

Առակի հիմնական նպատակը համարվում էր պատմվածքում կրոնական կամ աշխարհիկ իմաստի բացահայտումը: Առակների հերոսներն ունեին որոշակի սոցիալական կարգավիճակ (հարուստ, թագավոր, ճանապարհորդ, խաղողագործ, հայր և որդի) և չունեին արտաքինի կամ բնավորության խորը նկարագրություն:

Աստվածաշնչի առակները բացատրում էին, թե ինչպես վարվել մարդկանց և Աստծո առաջ լավ ապրելու համար: Նրանք ավելի շատ ազդեցին գիտակցության վրա, քան պարզապես մեղադրական կամ խրատական խոսքերը, քանի որ վարքի կանոնները ցույց էին տալիս կոնկրետ մարդկանց օրինակով: Երբ մարդը առակներում ինչ-որ օրինաչափություն էր տեսնում, մտածում էր, որ սխալ կյանք է վարում, կամ էլ հիշում էր փոքրիկ պատմության դասը և փորձում խուսափել իր կյանքում դառնություններից:

Ավետարանում շատ առակներ կան. Դրանցից մի քանիսը երկար են, իսկ որոշները՝ շատ կարճ, բայց ոչ պակաս ուսանելի՝ սովորողի կյանքում: Ինչպես օրինակ բարի սամարացու առակը, որը ոչ միայն սիրվում է դեռահասների կողմից այլ նաև թողնում է հոգևոր ազդեցությունը նրանց կյանքում:

Առակների նպատակը

10 Ապա աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.
— Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ:
11 Հիսուսը պատասխանեց նրանց.
— Դո՛ւք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց ո՛չ նրանք. 12 որովհետև ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն էլ: 13 Դրա համար է, որ ես առակներով եմ խոսում նրանց հետ, որովհետև նայում են, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու չեն հասկանում: 14 Այսպես է իրականանում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է.
«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա,
շարունակ կնայեն, բայց չեն տեսնի,
15 որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է.
նրանք խցել են իրենց ականջները
և փակել են իրենց աչքերը,
որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն, և ականջները լսեն,
մտքերը հասկանան ու դարձի գան,
և ես բժշկեմ նրանց»:

Սողոմոն թագավորի առակները

Սողոմոնը Դավիթ թագավորի որդին էր, ում մահից հետո նա վերցրեց Իսրայելի գահը: Նա երկիրը ղեկավարեց 40 տարի, չկռվեց հարեւանների հետ՝ իր ողջ ուժերն ու միջոցները ներդնելով երկրի զարգացման գործում: Մարդիկ գալիս էին թագավորի մոտ խորհուրդ ստանալու համար, եթե իրենք չէին կարողանում լուծել վեճը, և մի անգամ Սեբայի թագուհին թագավորի մոտ եկավ հեռավոր երկրներից: Նա շատ էր լսել տիրակալի իմաստության մասին և անձամբ համոզվել մարդկային ասեկոսեների ճշմարտացիության մեջ:

Սողոմոնը գրեց առակների գիրք, որը դարձավ Աստվածաշնչի մի մասը: Սողոմոնի հեղինակությանը վերագրվում է նաև Ժողովողի գիրքը, որը արտացոլում է ամենօրյա աղմուկի հիմարությունը, կյանքի իրական իմաստը և խոսում մարդկային մահվան մասին:

Առակներից շատերը սովորեցնում են, որ.

- որդիները պետք է հնազանդ լինեն իրենց ծնողներին և Աստծուն.
- հաշվի են առնվում իմաստունների առավելությունները հիմարների նկատմամբ.
- եթե նա տվել է իր խոսքը, նա պետք է կատարի խոստումը.
- ցուցադրվում է իրական և հավատարիմ կնոջ օրինակ.
- պոռնիկների (մարմնավաճառների) մոտ գնալը կփչացնի և կկործանի մարդուն.
- տրված է իմաստուն մարդու վարքագծի ալգորիթմ:

Առակների գիրքը բաղկացած է 31 գլխից: Նրա գլուխներում համառոտ դիտարկվում են կյանքի շատ իրավիճակներ, և այնուհետև Սողոմոնը պատմում է, թե ինչպես վարվել լավ գործելու և հաջողակ լինելու համար:

Առակները և նրանց վերլուծությունները

առակ բարի սամարացու մասին,

Երբ Քրիստոսին օրինականներից մեկը հարցրեց, թե ով է լինելու նրանց մերձավորը, նա որպես օրինակ բերեց այս առակ, որը ներկայացված է Ղուկասի_Ավետարանում (Ղուկաս 10:25)): Այն պատմում է մի ճանապարհորդի մասին, ում թալանում են, ծեծում, մերկացնում և կիսամեռ թողնում ճանապարհին: Նախ հոգևորականը, ապա ղևտացին անցնում են նրա կողքով, բայց նրանցից ոչ ոք օգնություն չի ցուցաբերում: Վերջապես անցնում է սամարացին: Ընդհանրապես սամարացիներն ու հրեաներն արհամարհում էին միմյանց, սակայն սամարացին օգնության է հասնում վիրավոր մարդուն: Հիսուսը նկարագրվում է օրենսգետի հարցին առակով պատասխանելիս. *«Ո՞վ է իմ մերձավորը»* (Ղուկաս 10:28, 29)), ում ղևտացին պետք է սիրի: Ի պատասխան՝ Հիսուսը պատմում է առակը, որի եզրահանգումն այն է, որ առակում մերձավորի կերպարը այն անձն է, ով ողորմածություն է ցույց տալիս վիրավոր մարդուն. այդ անձը սամարացին է: Ով անշահախնդրորեն օգնում և աջակցում է կիսամեռ մարդուն, չմտածելով անգամ, որ նա իր թշնամին է: Այնուհետև նա օրենսգետին հորդորում է «գնալ և այդպես վարվել» (Ղուկաս 10:36, 37): Հիսուսի պատասխանը համապատասխանում է Մաթեոսի Ավետարանում (Մաթեոս 5:43–48) նրա խոսքերին՝ սիրել թշնամուն:

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

«Եվ Հիսուս իր աշակերտներին ասաց. Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ, և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը: Տերը կանչեց նրան և ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին. տուր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող»: Տնտեսը իր մտքում ասաց. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս իմ ձեռքից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի երբ տնտեսությունից հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները»: Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է. Հարյուր տակառիկ ձեթ, և տնտեսը նրան ասում է. «Առ քո մուրհակը և նստիր ու անմիջապես գրիր՝ հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է. «Դու ինչքա՞ն պարտք ունես», և սա ասաց. «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց. «Առ քո մուրհակը և նստիր ու գրիր՝ չորս հարյուր»: Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ:

Վերլուծություն

Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները

մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:

Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Այսպայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Սերմնացանի առակը

3 Եվ նա առակներով շատ բաներ էր սովորեցնում նրանց և ասում.
4 — Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Երբ նա սերմանում էր, հատիկների մի մասն ընկավ ճանապարհի եզերքին, և թռչունները եկան ու կերան դրանք: 5 Ուրիշ հատիկներ ընկան ժայռոտ մի տեղ, ուր շատ հող չկար, և որովհետև հողը խորություն չուներ, իսկույն բուսան. 6 բայց երբ արևը ելավ, խանձվեցին, և քանի որ արմատ չունեին, չորացան: 7 Ուրիշ հատիկներ ընկան փշերի մեջ, և փշերը բարձրացան ու խեղդեցին դրանք: 8 Իսկ ուրիշներն ընկան լավ հողի մեջ և պտուղ տվեցին. մի մասը՝ մեկի տեղ հարյուր, ուրիշները՝ վաթսուն և կամ երեսուն: 9 Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Վերլուծություն

Սերմնացանը Քրիստոս է, սերմը՝ Աստծո խոսքը, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը՝ ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը, ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն՝ պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից: Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է:

Առաջին տիպի մարդիկ դրանք այն մարդիկ են, որոնց միտքը կարծր հողի նման չոր է: Երբ կարդում կամ լսում են Տիրոջ խոսքը անտարբերության արտաքին շերտը չի թողնում, որ հոգևոր սերմը թափանցի սրտի մեջ, և այն մնում է հիշողության մակերեսին և չար ուժերը՝ աշխարհի զվարճանքներն ու գայթակղությունները, թռչունների նման մարդկանցից հափշտակում են Տիրոջ խոսքը:

Երկրորդն այն մարդիկ են, ովքեր լսելով Ավետարանի քարոզը սիրո, արդարության, ինքնազոհության մասին, անմիջապես բորբոքվում են լուցկու նման, բայց անմիջապես հանգում: Քարքարոտ տեղում միայն մանր խոտ է աճում, այդպես էլ այս մարդիկ հանդարտ կյանքի պայմաններում ընդունակ են կատարել ջանքեր չպահանջող մանր շատ գործեր: Նրանք դեմ չեն առաքինությանը, բարոյականությանը, սակայն կկամենային Երկնքի արքայություն մտնել առանց բարդությունների: Իսկ երբ համոզմունքների համար ստիպված տանջանքներ ու զրկանքներ են կրում, անմիջապես ուրանում են Տիրոջը: Եսասիրության քարքարոտ հերտը չի թողնում, որ Աստծո խոսքը հասնի ու արմատավորվի նրանց սրտում:

Երրորդն այն մարդիկ են, ովքեր կամենում են միաժամանակ ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային Նրանք պիտանի չեն Աստծո արքայության համար, քանի որ կամենում են ապրել ըստ Աստծո օրենքների, բայց միաժամանակ չեն ցանկանում հրաժարվել աշխարհի ունայնությունից: Ի վերջո, աշխարհիկ հոգսերի, հետաքրքրությունների և հակումների հորձանուտը կլանում է նրանց իսպառ՝ հոգու միջից արտամղելով այն ամենն, ինչ լուսավոր է, խորհրդավոր և վեհ:

Չորրորդն այն կատարյալ մարդիկ են, ում խոսքը գործից չի տարբերվում, ովքեր Աստծո խոսքը լսելով և ընդունելով՝ փորձում են ապրել ուստվածահաճո կյանքով: Ճիշտ է, բոլորը միանման չեն կարողանում ավետարանական խոսքին հնազանդվել, քանզի մեկը պտղաբերում է երեսուն, մյուսը՝ վաթսուն, մյուսը՝ հարյուր, որը նշանակում է, թե մեկն ի վիճակի է կատարել մեկ երրորդն այն ամենի, ինչ իրենից պահանջում է քրիստոնեական հավատը, մյուսը՝ մոտավորապես երկու երրորդը, և

միայն քչերին է հաջողվում կատարել ամեն ինչ լիարժեք և կատարելապես: Դրանք ընտրյալ անհատականություններն են:

Պահված գանձի առակը

44 — Երկնքի արքայությունը նման է մի արտի մեջ պահված գանձի: Երբ մեկն այն գտնում է, կրկին ծածկում է հողի տակ և ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը ու գնում այդ արտը:

Վերլուծություն

Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է , որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում

17 Նմանապես, ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, այլապես տիկերը կպայթեն. գինին դուրս կթափվի, և տիկերը կփչանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում, և երկուսն էլ պահվում են:

Վերլուծություն

Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարիր են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Նոր կարկատանը հին հագուստի վրա

16 Ոչ ոք չլվացված նոր կտորը չի գործածի հնացած հագուստի համար կարկատան անելու, քանի որ նոր կտորը, քաշվելով, հագուստը կպատռտի, և պատռվածքը ավելի մեծ կլինի:

Վերլուծություն

Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ որ *"Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում"* առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպ3

Անպետք աղը

4 –Աղը լավ բան է, բայց եթե իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: 35 Ո՛չ հողին է օգտակար, ո՛չ էլ կարելի է դրանից պարարտանյութ պատրաստել, այլ դուրս են թափում: Ով լսելու ականջ ունի, թող լսի:

անվի:

Վերլուծություն

Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը: "Եթե աղը անհամանա" ասելով նա ի նկատի ուներ այն մարդկանց, ովքեր մեկ անգամ ճաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ հաղորդությունը, այնուհետև ընկան աններելի մեղքի մեջ և նրանք այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն ոչնչով հոգեպես նորոգվել:

Ժայռի վրա կառուցել տունը

47 Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: 48 Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: 49 Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՜նչ ահավոր է լինում այդ տան կործանումը:

Վերլուծություն

Ժայռը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ինչ-որ կառուցել ես, վաղ թե ուշ փլվելու է:

Մենք պետք է իմաստուն լինենք, եւ մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, այսինքն՝ ապրենք Նրա Խոսքի համաձայն: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն եւ դժվարություն չի կարող մեզ կործանել:

Պետք է Խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող:

ՓԱՐԻՍԵՑՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՎՈՐԻ ԱՌԱԿԸ

Նրանց, ովքեր իրենց մյուսներից ավելի արդար էին համարում, Հիսուսն ասաց հետևյալ առակը.

Փարիսեցին և մաքսավորը եկան տաճար՝ աղոթելու: Եվ հիմա փարիսեցին ասում է ինքն իրեն. «Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ես նման չեմ այլ մարդկանց՝ ավազակներին, հանցագործներին, շնացողներին կամ այս մաքսավորին»: Եվ մաքսավորը կանգնած էր հեռվում, չէր համարձակվում աչքերը բարձրացնել դեպի երկինք և շշնջաց. Ողորմիր ինձ, մեղավորիս»: Ասում եմ ձեզ, որ մաքսավորն ավելի արդարացված է Աստծո առաջ, քան փարիսեցին, որովհետև ամեն ոք, ով ինքն իրեն բարձրացնում է, նվաստացած կլինի, իսկ ով խոնարհեցնում է իրեն, կբարձրանա:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքում, ներկայացրեցի և վերլուծեցի աստվածաշնչյան առակներից մի քանիսը, որոնք անվիճելիորեն պետք է ներառվեն սովորողների դասագրքերում, քանզի դրանք մեծ դեր են կատարում նրանց դաստիարակության հարցում, օրինակ բարի սամարացու առակը, որը ուսանում է լինել՝ բարի, ազնիվ, սիրառատ անգամ թշնամուդ հանդեպ, օգնել և կարեկցել բոլոր նրանց, ովքեր ունեն դրա կարիքը, առանց հաշվի առնելու նրանց ով լինելը: Այս եղանակով երեխաների մեջ դաստիարակվում են բարոյական, վեհ մարդկային այնպիսի որակներ ինչպիսիք են՝ բարությունը,ազնվությունը, անկեղծությունը, հեզությունը,համբերատարությունը, անձնազոհությունը, ներողամտությունը և այլն: Ուստի տեղին եմ համարում նշել, լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում և գրականության գրքերում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ աստվածաշնչյան առակների ներառմամբ:

Գրականության ցանկ

1. Աստվածաշունչ՝ Սողոմոնի առակները, Ղուկաս 10:25, Ղուկաս 16:1-9, Մատթեոս 13: 1-9, Մատթեոս 13:44, Մարկոս 2:22, մատթեոս 5:13, Ղուկաս 18:10-14:

2. Սիոն: Ամսագիր ազգային, բանասիրական, գրագիտական եւ քաղաքական 1988

3. https://banyan.video.blog/2020/04/17/%D5%A1%D5%BD%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AE%D5%A1%D5%B7%D5%B6%D5%B9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80/